

ՄԱՍ 4. ՀԱՅԱՍՏԱՆ.
ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2014թ.-ին

Գլուխ 11. Աղքատության և կենսամակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականները

Աղքատությունը բազմաբնույթ է և այն կարող է չափվել և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ մոտեցումներով: Հայաստանում մեկ չափահասին համարժեք սպառման ազդեցատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի (30.0%) համեմատ, սուբյեկտիվ գնահատականներն (իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների անձնական տեսակետները) 1.8 անգամ ավելի ցածր են (17.0%): Իրենց ծայրահեղ աղքատ են համարել 2.4%-ը, ինչը համընկում է մեկ չափահասին համարժեք սպառման ցուցանիշով գնահատված ծայրահեղ աղքատության մակարդակին (2.3%):

Աղքատության մակարդակի վերաբերյալ սուբյեկտիվ գնահատականները 2008 և 2014թթ.-ին համընկել են (17.0 %):

11.1. Բնակչության կարծիքն իր կենսամակարդակի վերաբերյալ

2014թ.-ի հետազոտության ընթացքում տնային տնտեսությունների 16 և բարձր տարիքի առկա անդամներին տրվել են մի շարք հարցեր, որոնց հիման վրա գնահատվել են կենսամակարդակի առաջնային խնդիրները:

Աղյուսակ 11.1. Հայաստան. Տնային տնտեսությունների անդամների համար առավել առաջնային խնդիրները, 2014թ.

(տոկոսներով)

| Առաջնային խնդիրները | 2014թ. |
|--|--------|
| Մննդի ապահովման խնդիր | 14.0 |
| Ոչ պարենային առաջնային կարիքներ | 35.0 |
| Բնակարանային հիմնահարց | 19.6 |
| Երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու խնդիր | 2.5 |
| Առողջության խնդիր | 7.3 |
| Այլ | 21.6 |

Աղբյուրը. *SSՀԱՀ 2014թ.*

2014թ.-ին սննդի ապահովման հարցը հիմնական խնդիր համարող տնային տնտեսությունների անդամների մասնաբաժինը կազմել է 14%: Բնակչության 35%-ի գնահատմամբ ոչ պարենային կարիքներից բավարարվածությունը համարվում է կարևոր հիմնախնդիր: Ամեն հինգերորդի (20%) համար 2014թ.-ին ամենակարևորը բնակարանային հիմնահարցն է: Տնային տնտեսությունների 7% անդամների համար ամենաառաջնային խնդիրն առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունից զուրկ լինելն է: Հարցվողների մոտ 3%-ը նշել է երեխաներին բավարար կրթությամբ ապահովելու անկարողությունը, իսկ 22%-ը նշել է այլ առաջնային խնդիրներ:

2008-2014թթ.-ին կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը փոփոխվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 11.2 Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը, 2008-2014թթ.

(տոկոսներով)

| | Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը | | | | | |
|--------|---------------------------------------|-------|--------------|-------|---------------|---------|
| | ծայրահեղ աղքատ | աղքատ | միջինից ցածր | միջին | միջինից բարձր | հարուստ |
| 2008թ. | 2.3 | 14.7 | 35.6 | 43.0 | 4.2 | 0.2 |
| 2009թ. | 2.9 | 15.0 | 37.3 | 41.3 | 3.4 | 0.1 |
| 2010թ. | 2.2 | 12.4 | 38.8 | 42.2 | 4.0 | 0.4 |
| 2011թ. | 2.1 | 13.3 | 38.2 | 43.2 | 3.1 | 0.1 |
| 2012թ. | 3.1 | 14.5 | 38.2 | 39.9 | 4.2 | 0.1 |
| 2013թ. | 3.3 | 14.7 | 40.7 | 36.6 | 4.6 | 0.1 |
| 2014թ. | 2.4 | 14.6 | 42.3 | 36.5 | 4.1 | 0.1 |

Աղբյուրը. *SSԿԱՀ 2008-2014թթ.*

Ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականի՝ 2014թ.-ին **աղքատ (ներառյալ ծայրահեղ աղքատ) են իրենց համարել բնակչության 17.0%-ը** (2008թ.-ի նույն 17.0%-ի համեմատ): Ըստ հարցվածների ինքնագնահատման՝ 2014թ.-ին.

- միջին կենսամակարդակ ունեցել են հարցվածների 36.5%-ը՝ 2008թ.-ի 43.0%-ի համեմատ,
- 42.3%-ի կարծիքով իրենց կենսամակարդակը միջինից ցածր է՝ 2008թ.-ի 35.6%-ի դիմաց,
- իրենց հարուստ են համարել 0.1%-ը, 2008թ.-ի 0.2%-ի համեմատ,
- 4.1%-ը գտել է, որ ունի միջինից բարձր կենսամակարդակ, ինչը շատ մոտ է 2008թ.-ի գնահատականին (4.2%):

Այսպիսով, 2014թ.-ին 2008թ.-ի համեմատ սուբյեկտիվ գնահատականներում փոփոխություններ են նկատվել իրենց կենսամակարդակը միջինից ցածր և միջին գնահատող հարցվածների մոտ: 2014թ.-ին իրենց կենսամակարդակը գնահատել են միջինից ցածր հարցվածների 42.3%՝ 2008թ.-ի 35.6%-ի դիմաց (6.7 տոկոսային կետով աճ), իսկ միջին՝ հարցվածների 36.5%՝ 2008թ.-ի 43.0%-ի դիմաց (6.5 տոկոսային կետով նվազում): Թե որքանով են համընկնում կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, երևում է ստորև ներկայացված աղյուսակից, որտեղ տնային տնտեսությունների անդամները բաշխվել են ըստ սեփական կենսամակարդակին տրված իրենց իսկ գնահատականների և ըստ յուրաքանչյուր տնային տնտեսության անդամների համար հաշվարկված մեկ չափահասին համարժեք սպառման ազդեցատի, ինչին համապատասխան նրանք բաշխվել են՝ ըստ աղքատության մակարդակի:

Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, ըստ օբյեկտիվ գնահատականի՝ առաջին (ամենաաղքատ) սպառման դեցիլային խմբի բնակչության 38.2%-ի կարծիքը համընկել է սեփական կենսամակարդակին (ծայրահեղ աղքատ և աղքատ) տրված իրենց իսկ գնահատականներին: Իսկ տասներորդ (ամենահարուստ) սպառման դեցիլային խմբի բնակչության միայն 7.3%-ի կարծիքն է համընկել սեփական (միջինից բարձր և հարուստ) գնահատականներին:

Աղյուսակ 11.3. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ (ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի) գնահատականները
(%-ով՝ յուրաքանչյուր դեցիլային խմբի մեջ), 2014թ.

(տոկոսներով)

| Սպառման ագրեգատի դեցիլային խմբեր(օբյեկտիվ գնահատական) | Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը | | | | | |
|---|---------------------------------------|-------|--------------|-------|---------------|---------|
| | ծայրահեղ աղքատ | աղքատ | միջինից ցածր | միջին | միջինից բարձր | հարուստ |
| Ընդամենը | 2.4 | 14.6 | 42.3 | 36.5 | 4.1 | 0.1 |
| այդ թվում՝ | | | | | | |
| Առաջին դեցիլ | 7.1 | 31.1 | 42.7 | 17.7 | 1.4 | - |
| II | 2.9 | 19.3 | 42.6 | 31.3 | 3.9 | - |
| III | 3.1 | 16.6 | 45.8 | 30.4 | 4.1 | - |
| IV | 3.4 | 10.1 | 44.7 | 37.9 | 3.9 | - |
| V | 1.6 | 16.9 | 42.3 | 36.6 | 2.6 | - |
| VI | 1.7 | 13.6 | 43.8 | 38.5 | 2.4 | - |
| VII | 0.6 | 11.3 | 45.1 | 38.9 | 4.1 | - |
| VIII | 1.2 | 10.3 | 40.7 | 43.7 | 4.1 | - |
| IX | 1.2 | 9.4 | 39.0 | 43.1 | 6.6 | 0.7 |
| Տասներորդ դեցիլ | 1.2 | 8.5 | 37.8 | 45.2 | 7.3 | - |

Աղբյուրը. *SSYULZ 2014թ.*

Լշում. *Սպառումը հաշվարկվել է ըստ մեկ չափահասի սպառմանը համարժեք:*


Չնայած արդյունքները հիմնականում համընկնում են, սակայն ընդհանուր աղքատության սուբյեկտիվ գնահատականն ավելի ցածր է, քան օբյեկտիվը: Իրեն աղքատ է համարել (չհաշված ծայրահեղ աղքատներին) բնակչության 14.6%-ը, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա աղքատ է գնահատվել նույն մոտեցումով բնակչության 27.7 %-ը: Մինևույն ժամանակ բնակչության 2.4%-ն է իրեն գնահատել ծայրահեղ աղքատ, ինչը մոտ է մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ծայրահեղ աղքատ գնահատված բնակչության ցուցանիշին՝ 2.3%: Այդ իսկ պատճառով, 2014թ.-ին՝ ըստ ինքնագնահատման, աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 17.0%, իսկ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ընդհանուր աղքատության ցուցանիշը գնահատվել է 30.0%: Հետաքրքիրն այն է, որ իրենց կենսամակարդակը միջինից բարձր գնահատած տնային տնտեսությունները կազմել են 4.1%, և գրեթե ոչ մի տնային տնտեսություն (միայն 0.1%) իրեն հարուստ չի համարել:

Գծապատկեր 11.1-ում հետազոտված տնային տնտեսությունները բաշխվել են ըստ իրենց կենսամակարդակին տրված գնահատականների և ըստ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության մակարդակի: Այսպես, մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ոչ աղքատ գնահատված տնային տնտեսությունների 1.6%-ն իրեն գնահատել է որպես ծայրահեղ աղքատ, սպառման ագրեգատի հիման վրա աղքատ գնահատված տնային տնտեսությունների 4.1%-ը կարծում է, որ ինքը ծայրահեղ աղքատ է:

Սպառման ագրեգատով ծայրահեղ աղքատները հետևյալ գնահատականներն են տվել իրենց սոցիալ-տնտեսական վիճակին՝ 6.6%-ն իրեն համարել է ծայրահեղ աղքատ, 55.9%-ը՝ աղքատ, 30.3%-ը՝ միջինից ցածր, 7.0%-ը՝ միջին, 0.2%-ը՝ միջինից բարձր և ոչ մի ծայրահեղ աղքատ տնային տնտեսություն չի գնահատել իր կենսամակարդակը հարուստ:

Գծապատկեր 11.1. Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները, 2014թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. *SSYUՀ 2014թ.*

Հարցման մասնակիցների պատասխաններն այն հարցին, թե ամսական մեկ շնչի հաշվով որքան գումար է անհրաժեշտ լավ և շատ լավ ապրելու կամ գոյատևելու համար, ըստ 2008 և 2014թթ. հետազոտությունների արդյունքների, բերվում են ստորև.

Աղյուսակ 11.4. Հայաստան. Տնային տնտեսությունների տեսակետն ապրելու համար անհրաժեշտ մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի չափի վերաբերյալ 2008 և 2014թթ.

| | ՀՀ դրամով | | ԱՄՆ դոլարով | |
|-----------------------|-----------|-----------|-------------|--------|
| | 2008թ. | 2014թ. | 2008թ. | 2014թ. |
| Շատ լավ ապրելու համար | 853 804 | 1 297 693 | 2 350 | 3 120 |
| Լավ ապրելու համար | 191 591 | 294 060 | 527 | 707 |
| Գոյատևելու համար | 46 847 | 85 231 | 129 | 205 |

Աղբյուրը. *SSYUՀ 2008 և 2014թթ.*

Աղյուսակը ցույց է տալիս, որ 2008թ. համեմատ 2014թ.-ին գոյատևելու համար մեկ շնչի հաշվով ՀՀ դրամով անհրաժեշտ գումարն աճել է 1.8 անգամ, իսկ նույն ժամանակահատվածում, տնային տնտեսությունների կարծիքով լավ ապրելու համար անհրաժեշտ գումարի չափն աճել է ավելի քան 1.5 անգամ, սակայն շատ լավ ապրելու համար անհրաժեշտ մեկ շնչի հաշվով միջին ամսական եկամտի չափը նույն ժամանակաշրջանի համար աճել է ավելի քան 1.5 անգամ:

2008-2014թթ. արձանագրված փոփոխությունները արտացոլում են ապրուստի ավելի բարձր արժեքը (սղաճը), ինչպես նաև Հայաստանում լավ (կամ շատ լավ) ապրելու համար անհրաժեշտ պայմանների վերանայված սուբյեկտիվ գնահատականը:

2014թ. հետազոտության ընթացքում կենսամակարդակը բարձրացնելու ուղղությամբ ամենահաճախ պլաններից, տնային տնտեսության 16 և բարձր տարիքի անդամներից նշել են հետևյալը՝ ինձնից ոչինչ կախված չէ, կառավարությունը պետք է ապահովի աշխատանքով և լավ պայմաններով (41.5%) կամ պլաններ չունեն (20.2%): Հարցվածների 9.7%-ը նշել է, որ փնտրում է եկամտաբեր աշխատանք Հայաստանում, իսկ սեփական գործ Հայաստանում ցանկանում է սկսել միայն 1.0%-ը:

Հարցվածների 24.1%-ի կարծիքով նոր սերունդն ավելի լավ կապրի, մոտ նույնքանն էլ (23.9%) դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 31.0%-ի կարծիքով նոր սերունդն ավելի վատ կապրի, մնացած 21.0%-ի կարծիքով՝ նրանք կապրեն նույն ձևով:

11.2. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայությունների որակից

Հետազոտության ընթացքում պարզվել է հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների տեսակետը՝ տարբեր հաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայությունների վիճակի վերաբերյալ: Աղյուսակ 11.5-ում ներկայացված է հարցման մասնակիցների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից: Աղյուսակից երևում է, որ 2014թ.-ին տնային տնտեսությունները հիմնականում բավարարված են էլեկտրաէներգիայի մատակարարումից (97%-ը վկայել է այդ մասին): Բավարարվածության աստիճանը բարձր է նաև փոստի ծառայություններից՝ 81%, ջրամատակարարման ծառայությունից՝ 80%, հասարակական տրանսպորտի աշխատանքից՝ 79%, հեռախոսային ծառայություններից՝ 76%, աղբի հավաքումից՝ ևս 76%, ջրահեռացման ծառայությունից՝ 72%: Մինևս ժամանակ տնային տնտեսությունների մի մասը անբավարարվածություն է հայտնել առողջապահության, ոռոգման, աղբի հավաքման, ջրամատակարարման և հասարակական տրանսպորտի ծառայություններից (17-ից մինչև 30%): 2008թ.-ի համեմատ՝ 2014թ.-ին տնային տնտեսությունների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից աճել է, բացի առողջապահության, կրթության և ոռոգման ծառայություններից :

Աղյուսակ 11.5. Հայաստան. Բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից, 2008 և 2014թթ.

(տոկոսներով)

| Վճարովի ծառայությունների անվանումը | Բավարարված են | | Բավարարված չեն | | Դժվարացել են պատասխանել | |
|------------------------------------|---------------|--------|----------------|--------|-------------------------|--------|
| | 2008թ. | 2014թ. | 2008թ. | 2014թ. | 2008թ. | 2014թ. |
| Ջրամատակարարում | 57.1 | 80.2 | 42.5 | 19.2 | 0.4 | 0.6 |
| Ջրահեռացում | 65.0 | 71.5 | 23.1 | 15.4 | 11.9 | 13.1 |
| Աղբի հավաքում | 54.1 | 75.6 | 42.4 | 21.3 | 3.5 | 3.1 |
| Հեռախոս | 74.2 | 76.0 | 13.5 | 7.0 | 12.3 | 17.0 |
| Էլեկտրաէներգիայի մատակարարում | 97.4 | 96.7 | 2.4 | 3.2 | 0.2 | 0.1 |
| Փոստ | 73.7 | 80.7 | 2.6 | 2.1 | 23.7 | 17.2 |
| Բանկերի աշխատանք | 61.4 | 71.0 | 2.4 | 6.3 | 36.2 | 22.7 |
| Ոռոգում | 18,2 | 13.0 | 20.9 | 25.5 | 60.9 | 61.5 |
| Առողջապահություն | 56.1 | 54.7 | 29.0 | 29.7 | 14.9 | 15.6 |
| Կրթություն | 62.2 | 52.2 | 15.5 | 15.8 | 22.3 | 32.0 |
| Հասարակական տրանսպորտ | 80.2 | 79.2 | 15.6 | 17.0 | 4.2 | 3.8 |


Աղբյուրը. 2008 և 2014թթ. SSԿԱՀ

Այն հարցին, թե վերջին 12 ամիսների ընթացքում ինչպիսի փոփոխություններ են եղել վերը նշված ծառայությունների մատուցման մեջ, հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների որոշ մասը դրական տեղաշարժ է նկատել, այսպես, 1.4%-ից՝ (ոռոգում) որպես նվազագույն դրական տեղաշարժ, մինչև 17.3%՝ (փոստի ծառայություններ) որպես առավելագույն դրական տեղաշարժ:

Գծապատկերներ 11.2-ում և 11.3-ում ներկայացված են 2014թ.-ին ծառայությունների մատուցման մեջ կատարված դրական և բացասական փոփոխություններն՝ առավել մանրամասն:

Գծապատկեր 11.2. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված դրական փոփոխությունները, 2014թ.,

(տոկոսներով)




Աղբյուրը. 2014թ. SSԿԱՀ

2014թ.-ին ծառայությունների մատուցման մեջ արձանագրված ամենադրական տեղաշարժերը կատարվել են փոստի աշխատանքում, հասարակական տրանսպորտի, բանկերի, աղբահանության, ջրամատակարարման և էլեկտրաէներգիայի մատակարարման մեջ:

Գծապատկեր 11.3. Հայաստան. Ծառայությունների մատուցման մեջ հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների կողմից արձանագրված բացասական փոփոխությունները, 2014թ.

(տոկոսներով)



Աղբյուրը. 2014թ. ՏՏԿԱՀ

Համաձայն 2014թ. ՏՏԿԱՀ արդյունքների, ծառայությունների մատուցման գործում արձանագրված ամենաբացասական տեղաշարժերը գրանցվել են առողջապահության (12.4%) և կրթության (8.3%) ոլորտներում (Գծապատկեր 11.3):

Ծառայությունների որակի վատացման դեպքում, հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների չնչին մասն է դիմել համապատասխան ծառայությունների ղեկավարությանը: Աղյուսակ 11.6-ում ներկայացված են ծառայությունների որակի վատացում արձանագրած բնակչության ձեռնարկած քայլերը և ստացված արդյունքները: Ինչպես երևում է աղյուսակից, բնակչությունը բավական հազվադեպ է դիմում մատուցվող ծառայությունների որակի բարելավման հայցով:

Բացի քանակական տվյալներից, շատ կարևոր են որակական տվյալները: Այսպես օրինակ, չնայած խմելու ջրի մատակարարման բողոքներին, ղեկավարության կողմից միայն 36.5%-ի դեպքում է նախաձեռնություն ցուցաբերվել շտկելու դրությունը, առողջապահության ծառայությունների մատուցման վատ աշխատանքի դեպքում ընթացք է տրվել դիմումների 38.1%-ին, աղբի հավաքման՝ 24.5%-ին, կրթական ծառայությունների մատուցման՝ 43.5%-ին, հասարակական տրանսպորտի՝ 21.5%-ին:

**Աղյուսակ 11.6. Հայաստան. Ծառայությունների որակի վատացման դեպքում դիմելը
համապատասխան ծառայությունների ղեկավարությանը, 2008 և 2014թթ.**

(տոկոսներով)

| Վճարովի ծառայությունների անվանումը | Գրանցվել է մատուցվող ծառայության որակի վատացում | | Չեն դիմել ղեկավարությանը ծառայության որակի վատացման դեպքում | | Դիմելու դեպքում ղեկավարությունը ձեռնարկել է որոշակի քայլեր իրավիճակը բարելավելու համար | |
|--|--|--------|--|---------|--|---------|
| | 2008 թ. | 2014թ. | 2008 թ. | 2014 թ. | 2008 թ. | 2014 թ. |
| Ջրամատակարարում | 10.9 | 3.6 | 93.7 | 96.3 | 19.6 | 36.5 |
| Ջրահեռացում | 3.6 | 2.7 | 97.2 | 98.7 | 52.8 | 57.8 |
| Աղբի հավաքում | 8.6 | 3.8 | 96.6 | 97.3 | 30.8 | 24.5 |
| Հեռախոս | 4.1 | 2.1 | 93.3 | 97.5 | 75.8 | 86.8 |
| Էլեկտրաէներգիայի մատակարարում | 0.8 | 2.8 | 94.8 | 97.2 | 91.1 | 81.5 |
| Փոստ | 0.6 | 1.8 | 99.5 | 99.5 | 84.7 | 92.4 |
| Բանկերի աշխատանք | 0.9 | 3.7 | 99.3 | 99.5 | 84.6 | 67.9 |
| Ոռոգում | 2.2 | 5.0 | 97.2 | 98.4 | 30.2 | 33.5 |
| Առողջապահություն | 7.7 | 12.4 | 98.3 | 98.8 | 30.3 | 38.1 |
| Կրթություն | 6.3 | 8.3 | 99.3 | 99.7 | 34.2 | 43.5 |
| Հասարակական տրանսպորտ | 4.5 | 5.5 | 99.2 | 98.7 | 51.9 | 21.5 |

Աղբյուրը. 2008 և 2014թթ. SSԿԱՀ